դուքն դէպքի մասին՝ շտապեց երկու հազարից բաղկացած լեզգինների մի գունդ ուղարկելու, որ բագուցիներին պատժեն։ Իւզբաշի Վերգեա Ղուլին տեսնելով, որ նոցա հետ բաց դաշտավայրի վրայ անհնարին է կռուել, հաւաքեց բնակիչներին Բագուայ բերդը և պաշտպանողական դիրք բռնեց։ Լեզգիները տեղաւորուեցան Շահի այգում, որը այն ժամանակ գտնուում էր քաղաքի դիմաց, որ տեղ հիմա կառուցած է Հայոց եկեղեցին և Բէյլական դպրոցը։ Պատնէշներ շինեցին և խիստ պաշարելով բերդը՝ մտածում էին սովով հարկադրել բագուեցւոց անձնատուր լինել, քանի որ Լեզգիների շուտափոյթ երեւան գալը միջոց չէր տուել իրանց և կեն-դանիների ուտեստի պաշար պատրաստելու։ Ցիրաւի պաշարուածները կարճատեւ ռմբակոծութիւնից յետոյ այլ եւս Հայց չունէին և սկսեցին կերակրուել ձիաների մսով։ Աղքատութիւնը, նեղութիւնը օրէց օր սաստկանում էր. նոցա տիրեց վհատութիւն։ Բայց Վերգեա — Ղուլին հաստատամտութեամբ տանում էր բոլորը դեռ եւս փրկութեան յոյս ունենալով։ Նա ընտրեց մի անձրեւային գիշեր յարձակումն գործելու թշնամիների վրայ, որովհետեւ լեզգիները չէին կարող մնալ պատնէշների ետեւը և պէտք է պատըսպարուէին անձրեւից։ Վերգեա Ղուլին վերցրեց իւր հետ մի քանի հարիւր յայտնի քաջեր և յանկարծակի յարձակուեց թշնամիների վրայ։ Այդ վարմունքը այնչափ շփոթութիւն ձգեց թշնամու բանակի մէջ, որ մինչեւ անգամ նոքա ժամանակ չունեցան վերցնելու իրանց զէնքերը. մի մասը դիմեց փախուստի, իսկ մնացածը կատաղած բագուեցիների դաշոյններին զոհ եղան։ Այդ վճռական և հրաշալի գործը, որ պսակուեց կատարեալ յաղթութեամբ՝ երեւան հանեց Վերգեա—Ղուլիի արժանիքները, իբրեւ հմուտ մարտնչողի, որին իբրեւ փրկչի՝ ժողովուրդը նայում էր առանձին ակնածութեամբ։ Բայց և այնպէս ոչ ինքը և ոչ ժողովուրդը չէին կարող հրատարակել նորան *Խան*, որովհետեւ այդ տիտղոսը պէտք է շնորհէր նորան թագադրուած անձն։

1722 թուականին Վերգեա Ղուլին աչքի առաջ ունենալով Պետրոս Մեծի գալուստը Դերբէնդ քաղաքը, կարգադրեց պատրաստութիւն տեսնելու ռուսներից պաշտպանելու։ Երբոր բագուեցիները հրաժարուեցին ինքնակամ կերպով յանձնել քաղաքը և ըն-